

# ՍԻԱՍԱՎԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՝ ղիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարությունը: Պատասխանների ճնարդի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

1

Որտե՞ղ են հասունանում մուկորի սպորները.

- 1) սնկամարմնից հիֆերի առանձնացման ժամանակ ցանկացած տեղում
- 2) սնկամարմնից վեր բարձրացող վլանաձև ճյուղավորված թելերի ծայրերում
- 3) սնկամարմնից վեր բարձրացող հիֆերի գնդաձև գլխարկներում
- 4) մուկորը բազմանում է բողբոջման եղանակով

2

Ինչպիսի՞ կառուցվածք ունի անձրևորդի նյարդային համակարգը.

- 1) երկու հանգույցից բաղկացած շուրջկլանային նյարդային օղակ՝ կազմված աստղաձև բջիջներից, իսկ մարմնի տարբեր մասերում՝ չորս հանգույցից
- 2) շուրջկլանային նյարդային օղակ և մեջքի նյարդային շղթա
- 3) վերկլանային և ենթակլանային հանգույցներ, որոնք միացած են նյարդային թելերով և փորի նյարդային շղթա
- 4) նյարդային հանգույց, նրանից դուրս եկող երկու նյարդային բներ՝ կազմված նյարդային բջիջներից և նյարդաթելերից

3

Ո՞ր բույսի տերևն ունի ցանցածիղ ջղավորություն.

- 1) եզան լեզվի
- 2) ցորենի
- 3) սոխի
- 4) գորտնուկի

4

Թռչունների արյան շրջանառության մեջ շրջանն սկսվում է.

- 1) աջ փորոքից
- 2) ձախ փորոքից
- 3) աջ նախարտից
- 4) ձախ նախարտից

5

Որտե՞ղ են բացվում միջատների մալայիզյան անոքները.

- 1) մարմնի խոռոչում
- 2) ճարպային մարմնում
- 3) հետնադու սկզբնամասում
- 4) արտաքին միջավայրում

6

Ուկրային ճկների ո՞ր լողակներն են զույգ.

- 1) փորային
- 2) ենթապոչային
- 3) հետանցքի
- 4) մեջքային

7

**Ի՞նչ գործընթաց է իրականացնում աղքենալինը մարդու օրգանիզմում.**

- 1) իջեցնում է արյան ճնշումը
- 2) գլյուկոզը վերածում է գլիկոգենի
- 3) նեղացնում է արյունատար անոքները
- 4) դանդաղեցնում է սրտի աշխատանքը

8

**Ո՞ր ռսկորներն են կազմում կրծքավանդակի կմախքը.**

- 1) կրծքային ողերը, 12 զույգ կողերը, կրծոսկրը
- 2) կողերը, կրծոսկրը, անրակները և թիակները
- 3) կրծքային ողերը, 12 զույգ կողերը, անրակները և թիակները
- 4) կրծքային ողերը, 12 զույգ կողերը, կրծոսկրը, թիակները

9

**Ո՞ր նյութի սինթեզը չի իրականացնում լյարդը.**

- 1) պլոտքրոմբինի
- 2) հեպարինի
- 3) գլիկոգենի
- 4) ֆիբրինի

10

**Որտե՞ղ են գտնվում մարդու սրտի գործունեությունը կարգավորող կենտրոնները.**

- 1) երկարավուն ուղեղում և կամքջում
- 2) ողնուղեղի կրծքային և սրբանային հատվածներում
- 3) երկարավուն ուղեղում, ողնուղեղի կրծքային հատվածներում
- 4) միջին ուղեղում և ողնուղեղի գոտկային հատվածներում

11

**Ո՞ր ռեֆլեքսն է պարզ.**

- 1) թքարտադրություն
- 2) փոշտոց
- 3) քրտնարտադրություն
- 4) աղցունքազատում

12

**Ի՞նչ է դիտվում մարդու օրգանիզմում B<sub>2</sub> վիտամինի անբավարարության դեպքում.**

- 1) սիրտ-անոքային և նյարդային համակարգերի աշխատանքի խանգարում
- 2) տեսողության խանգարում, բերանի լորձաթաղանթի ախտահարում
- 3) արյունազեղումներ, հավկուրություն
- 4) ռախիտ, մկանային ցավեր

13

Որտե՞ղ են գտնվում մարդու տեսողական ընկալիչները.

- 1) ապակենման մարմնում և ցանցաթաղանթում
- 2) եղջերաթաղանթում
- 3) անոքաթաղանթում
- 4) ցանցաթաղանթում

14

Ո՞ր հիվանդության հարուցիչը չի պատկանում պրոկարիոտներին.

- 1) անզինայի
- 2) խոլերայի
- 3) կարմրուկի
- 4) որովայնային տիֆի

15

Կորիզակներն առաջանում են՝

- 1) հարթ էնդոպլազմային ցանցի թաղանթների վրա
- 2) բջջային կենտրոնում
- 3) կորիզաթաղանթի ներքին թաղանթի վրա
- 4) քրոմոսոմների որոշակի հատվածներում

16

Որո՞նք են դասվում ֆազերի շարքին.

- 1) ֆազոցիտոզ իրականացնող լեյկոցիտները
- 2) աղիքային ցուպիկի վիրուսները
- 3) կենդանիների վիրուսները
- 4) բույսերի վիրուսները

17

Ո՞ր ածխաջրերն են մտնում սնկերի բջջապատի կազմության մեջ.

- 1) թաղանթանյութը և խիտինը
- 2) մանաճը և խիտինը
- 3) մանաճը և օսլան
- 4) հեպարինը և մանաճը

18

ԴՆԹ-ի մոլեկուլում ինչպե՞ս են միմյանց միանում պոլիմուկլեոտիդային երկու շղթաները.

- 1) մի շղթայի նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի և մյուս շղթայի նուկլեոտիդի ածխաջրային մնացորդի միջոցով
- 2) մի շղթայի նուկլեոտիդի ազոտական հիմքի և մյուս շղթայի նուկլեոտիդի ածխաջրային մնացորդի միջոցով
- 3) ազոտական հիմքերի միջև առաջացող կովալենտ կապերի միջոցով
- 4) ազոտական հիմքերի միջև առաջացող ջրածնային կապերի միջոցով

19

**Պորինային ազոտական հիմքեր են.**

- 1) աղենինը և թիմինը
- 2) գուանինը և ցիտոզինը
- 3) աղենինը և գուանինը
- 4) աղենինը և ցիտոզինը

20

**Պլազմալեմի միջով նյութերի տեղափոխությունը ըստ գործիքնենուի.**

- 1) կոչվում է ցիտոզ
- 2) կոչվում է ակտիվ տեղափոխություն
- 3) կոչվում է պասիվ տեղափոխություն
- 4) արտաքին էներգիայի ծախս է պահանջում

21

**Ֆոտոսինթեզի լուսային փուլում տեղի են ունենում հետևյալ գործընթացները.**

- 1) ատոմային թթվածնի առաջացում, մոլեկուլային ջրածնի առաջացում, ԱԵՖ-ի սինթեզ
- 2) մոլեկուլային ջրածնի առաջացում, ատոմային թթվածնի առաջացում, ածխաջրերի սինթեզ
- 3) ատոմային ջրածնի առաջացում, մոլեկուլային թթվածնի առաջացում, ԱԵՖ-ի սինթեզ
- 4) ԱԵՖ-ի սինթեզ, մոլեկուլային ջրածնի առաջացում, ածխաջրերի սինթեզ

22

**Բազմացման ո՞ր եղանակն է բնորոշ նախակենդանիներից սպորավորներին.**

- 1) բազմակի կիսումը
- 2) բջջի հատվածավորումը
- 3) սպորներով բազմացումը
- 4) զոսապորներով բազմացումը

23

**Ինչպես է առաջանում երկկենցաղների ներքին սաղմնային թերթիկը՝ էնտոդերմը.**

- 1) բլաստուլի պատի ներփրման միջոցով
- 2) բլաստուլի պատի բջջների կրկնապատկման միջոցով
- 3) դեպի անիմալ քենո վեգետատիվ բջջների տեղաշարժման միջոցով
- 4) դեպի վեգետատիվ քենո անիմալ քենոի բջջների տեղաշարժման միջոցով

24

**Ինչպիսի՞ն է երկնագույն աչքերով երեխա ծնվելու հավանականությունը՝ ըստ տվյալ հատկանիշի հետերոզիզոս ծնողներից.**

- 1) 0 %
- 2) 25 %
- 3) 50 %
- 4) 75 %

25

Ի՞նչ պրոցեսները են տեղի ունենում ինտերֆազի G<sub>2</sub> փուլում.

- 1) քրոմոսոմները կրկնապատկվում են
- 2) կրկնապատկվում են բջջային կենտրոնի ցենտրիոլները
- 3) բջիջը նախապատրաստվում է ԴՆԹ-ի կրկնապատկմանը
- 4) սինթեզվում են քրոմոսոմների բաղադրության մեջ նտնօղ սպիտակուցներ

26

Ո՞ր կենդանիների օրգանիզմում է հանդիպում արական հետերոգամետություն.

- 1) դրոզոֆիլ պտղաճանճի և թիթեռների
- 2) թիթեռների և մարդու
- 3) թռչունների և սողունների
- 4) կաթնասունների և դրոզոֆիլ պտղաճանճի

27

Ի՞նչ է տեղի ունենում սերմնարանների աճման գոտում.

- 1) միտոտիկ բաժանում
- 2) ԴՆԹ-ի կրկնապատկում
- 3) մեյոզի երկու բաժանումներ
- 4) սպերմատոզոնիումների ձևավորում

28

Նշված երկիրքիդային ո՞ր խաչաերումն է հանգեցնում ճեղքավորման 1:1:1:1 հարաբերությամբ, եթե երկու ալելներում էլ առկա է ոչ լրիվ դոմինանտություն.

- 1) AABb և AABb
- 2) Aabb և aaBb
- 3) AAAb և aaBB
- 4) AaBb և AaBB

29

Ի՞նչն է ընկած պոլիազոլիդիայի հիմքում.

- 1) բջիջ բաժանման ժամանակ քրոմոսոմների տարամիտման խախտումը
- 2) քրոմոսոմի որևէ հատվածի  $180^{\circ}$  անկյան տակ պտույտը
- 3) քրոմոսոմի մի մասի՝ նրան ոչ հոմոլոգ քրոմոսոմի վրա տեղափոխումը
- 4) գենային մուտացիան

30

Ո՞ր օրգանները հոմոլոգ չեն.

- 1) ոլորի բեղիկները և կակտուսի փշերը
- 2) օձերի թունավոր գեղձերը և կենդանիների թքագեղձերը
- 3) կարտոֆիլի պալարը և սնդրուկի կոճղարմատը
- 4) ձկների և խեցգետինների խոիկները

31

**Նշված պնդումներից ո՞րն է համապատասխանում գենետիկական չափանիշին.**

- 1) կրկնորդ տեսակների առանձնյակները չեն կարող խաչասերվել իրար հետ
- 2) մի տեսակի առանձնյակներն ունեն արտաքին և ներքին կառուցվածքի նմանություն
- 3) յուրաքանչյուր տեսակ զբաղեցնում է խիստ որոշակի արեալ
- 4) տեսակների մեծամասնությունն ունի խիստ որոշակի կարիոտիալ

32

**Ո՞ր օրգանիզմներն են մասնակցում ազոտի կենսաքանական կապմանը.**

- 1) կապտականաչ ջրիմուները
- 2) ամոնիֆիկացնող բակտերիաները
- 3) նիտրիֆիկացնող բակտերիաները
- 4) դենիտրիֆիկացնող բակտերիաները

33

**Ինչի՞ օրինակ է շնաձկան և դելֆինի մարմնի ձևի նմանությունը.**

- 1) դիվերգենցիայի
- 2) արոմորֆոզի
- 3) կոնվերգենցիայի
- 4) զուգահեռության

34

**Ո՞ր օրգանիզմների փոխհարաբերությունն է փոխօգտակար և ոչ պարտադիր.**

- 1) խեցգետնի և ակտինիայի
- 2) ծառերի և էպիֆիտ բույսերի
- 3) քարաքոսի կազմի մեջ մտնող սնկի և ջրիմուի
- 4) ընդավորների և ազոտ ֆիքսող բակտերիաների

(35-36) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածը կազմված է 9240 նուկլեոտիդներից, իսկ Ա+Թ / Գ+Ց քանակական հարաբերությունն այդ հատվածում հավասար է 1,2-ի:

35

Գտնել աղենինային նուկլեոտիդի քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 2100
- 2) 2520
- 3) 5040
- 4) 1260

36

Գտնել ցիտոզինային նուկլեոտիդի քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 1260
- 2) 1050
- 3) 2100
- 4) 2520

(37-38) Սպիտակուցի մոլեկուլային գանգվածը 15600 գ.ա.մ. (գանգվածի ատոմական միավոր) է: Ամինաթթուների միջին մոլեկուլային գանգվածը 120 գ.ա.մ. է, նուկլեոտիդներինը՝ 300 գ.ա.մ.:

37

Ինչքա՞ն ժամանակում (վրկ) բջջում կսինթեզվի տվյալ սպիտակուցը, եթե մեկ ամինաթթվի միացումը կատարվում է  $1/6 - 1/5$  վրկ-ում.

- 1) 43-51,6
- 2) 8,5-10,2
- 3) 17-20,4
- 4) 21,5-25,8

38

Գտնել տվյալ սպիտակուցի սինթեզը պայմանավորող գենի մոլեկուլային գանգվածը.

- 1) 62400
- 2) 468000
- 3) 117000
- 4) 234000

(39-40) Խաչասերել են AABbCcDdEe × AaBbCcDDEe գենոտիպերով առանձնյակներին: Ալելային գեների առաջին երեք զույգերում առկա է ոչ լրիվ դոմինանտուրյուն, իսկ վերջին երկուսում՝ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր զույգերում:

39

Գտնել սերնդում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 81
- 2) 36
- 3) 54
- 4) 108

40

Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 81
- 2) 36
- 3) 54
- 4) 108

41

Ի՞նչ հաջորդականությամբ են ընթանում բջջի կենսական ցիկլի գործընթացները.

1. ցենտրիուլների հեռացում դեպի բջջի հակադիր քևեռներ
2. քրոմոսոմների ազատ դասավորում ցիտոպլազմայում՝ իլիկի հասարակածային հարթությունում, և կենտրոնական մասում իլիկի թելիկի ամրացում յուրաքանչյուր քրոմոսոմին
3. բաժանման իլիկի թելիկների առաջացում
4. օրգանիզմների կրկնապատկում և ԴՆԹ-ի սինթեզ
5. քրոմատիզմների տարամիտում դեպի բջջի հակադիր քևեռներ
6. ցիտոպլազմայի բաժանում և երկու դուստր բջիջների ձևավորում
7. կորիզաքաղանթի լուծում
8. բջջի քևեռներում կորիզաքաղանթի և կորիզակի ձևավորում

42

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. գազափոխանակությանը մասնակցող օդը կոչվում է շնչառական ծավալ
2. արտաշնչման փուլը սկսվում է, երբ կծկվում են թոքաբշտերի առաձգական թելերը, և ճնշումը թոքերում աճում է
3. արյան մեջ CO<sub>2</sub>-ի խտության նվազման դեպքում շնչառությունը դառնում է ավելի խորը և արագ
4. կրծքավանդակի խոռոչի ծավալը մեծանում է, երբ մթնոլորտային օդը թափանցում է թոքեր
5. աջ թոքը մեծ է ձախի թոքից
6. թոքերում տեղի ունեցող գազափոխանակությանը մասնակցում է միայն 360սմ<sup>3</sup> օդ
7. թոքի հյուսվածքը ձևավորվում է ճյուղավորված թրոնիսներով և թոքաբշտերով

43

Նշվածներից ո՞ր նյութերն են կենսահանքային: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. հողը
2. նավթը
3. քարածուխը
4. օվկիանոսի ջրերը
5. կրային ապարները
6. մքնոլորտի գազերը

44

Կրկնակի բեղմնավորման արդյունքում բույսի ծաղկի ո՞ր մասից (նշված է ձախ մասում) ի՞նչ է զարգանում (նշված է աջ մասում): Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

- |  |                |
|--|----------------|
| A. զիգոտից                             | 1. պտղապատը    |
| B. սաղմնապարկից                        | 2. պտուղը      |
| C. վարսանից                            | 3. սերմնամաշկը |
| D. սաղմնապարկի պատից                   | 4. էնդոսպերմը  |
| E. սերմնարանի պատից                    | 5. սերմի սաղմը |
| F. կենտրոնական բջիջից և սպերմիումներից | 6. սերմը       |
- մեկի միաձուլումից

45

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Միտոքոնյորիումների ներքին քաղանթում կան ներկառուցված ԱԵՖ-սինթազ ֆերմենտի մոլեկուլներ, որոնք ունակ են ճեղքելու ԱԵՖ-ը մինչև ԱԿՖ-ի և ֆուֆորական թթվի
2. Գլյուկոզի ճեղքավորման թթվածնային փուլում  $\text{CH}_2 \cdot \text{H}_2$ -ի և  $\text{CH}_2 \cdot \text{H}_2$  -ի այրոտունների և էլեկտրոնների վերջնական ակցեպտորը մոլեկուլային թթվածինն է
3. Կորիզավոր բջիջներում գլյուկոզի արդյունքում առաջացած պիրոխաղողաքրուն թթվածնի քավարար քանակության պայմաններում անցնում է միտոքոնյորիումներ և ենթարկվում հետագա ճեղքման, որի արդյունքում առաջանում է կաթնաքրուն
4. Էներգիական փոխանակության թթվածնային փուլում, եթե այրոտունային պոտենցիալը միտոքոնյորիումների ներքին քաղանթի երկու կողմերում հասնում է որոշակի սահմանային մեծության, այրոտուններն էլեկտրական դաշտի ազդեցության տակ մղվում են ԱԵՖ-սինթազի անցուղու միջով՝ ներքին մակերևույթից դեպի քաղանթի հակառակ կողմը
5. ԱԵՖ-սինթազ ֆերմենտի մոլեկուլները ներկառուցված են միտոքոնյորիումների ներքին քաղանթներում
6. Գլյուկոզի թթվածնային ճեղքման արդյունքում անջատված ամբողջ էներգիան կուտակվում է ԱԵՖ-ի ձևով

## Բ մակարդակ

46

Մարդու օրգանիզմում ի՞նչ հաջորդականությամբ է տեղի ունենում արյան շրջանառությունը՝ սկսած ներքին օրգանից՝ լյարդից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. աջ փորոք
2. թոքային երակ
3. առրտա
4. լյարդի երակ
5. ձախ փորոք
6. աջ նախասիրտ
7. թոքային զարկերակ

47

Ինչպիսի՞ն է մարդու լսողական վերլուծիչում գործընթացների հաջորդականությունը: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. նյարդային գրգիռների հաղորդում միջանկյալ ուղեղ
2. ձայնի բարձրության վերջնական զանազանում
3. հիմային թաղանթի թելիկների տատանումներ
4. ձայնային ալիքների որսում
5. մուրճիկի տատանումներ
6. նյարդային վերջույթների գրգռում
7. ձվածև պատուհանի թաղանթի տատանումներ

48

Ի՞նչ հաջորդականությամբ է ազդակն անցնում ռեֆլեքսային աղեղով մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ներդիր նեյրոն
2. զգայական նեյրոնի դենորիտ
3. զգայական նեյրոնի աքսոն
4. գործառող օրգան
5. ընկալիչ
6. ողնուղեղային հանգույց
7. շարժողական նեյրոն

49

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում մարդու օրգանիզմում մարսողության գործընթացները՝ սկսած քերանի խոռոչում սննդի հայտնվելու պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. սպիտակուցների ճեղքում մինչև ամինաթթուներ, ճարպերի ճեղքում մինչև գլցերին և ճարպաթթուներ
2. բարդ ածխաջրերի ճեղքում համեմատաբար պարզ ածխաջրերի թույլ հիմնային միջավայրում
3. սպիտակուցների սինթեզ բջիջներում
4. ենթաստամոքսահյութի և լեղու ներգործություն
5. ներծծում
6. թքազատում
7. սպիտակուցների ճեղքում համեմատաբար պարզ մոլեկուլների (պեպտիդների)

50

Մարդու գլխուղեղի ո՞ր բաժինը (նշված է աջ սյունակում) ո՞ր գործառույթն է (նշված է ձախ սյունակում) իրականացնում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործառույթ

Գլխուղեղի բաժին

- A. ապահովում է կմախքային մկանների լարվածությունը  
B. կարգավորում է դեմքի մկանների աշխատանքը  
C. ապահովում է գլխի շրջադարձը դեպի ձայնի աղբյուրը  
D. կարգավորում է շնչառական շարժումները  
E. կարգավորում է սրտի կծկումների հաճախականությունը  
F. կարգավորում է կլման գործընթացը

1. կամուրջ  
2. միջին ուղեղ  
3. երկարավուն ուղեղ

51

Ողնաշարավոր կենդանիների ո՞ր օրգանը, կառույցը (նշված է ձախ սյունակում) սաղմնային ո՞ր թերթիկից է (նշված է աջ սյունակում) առաջացել: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգան, կառույց

Սաղմնային թերթիկ

- A. ստամոքս, ենթաստամոքսային գեղձ  
B. մաշկի էպիթել  
C. տասներկումատնյա և հաստ աղիք  
D. վերին և ստորին վերջույթների կմախք  
E. սրտամկան, միջկողային մկաններ  
F. աչք  
G. արյունատար անոթներ

1. մեզոդերմ  
2. էկտոդերմ  
3. էնտոդերմ

52

**Ինչպիսի՞ համապատասխանություն գոյություն ունի փոխարարերությունների ձևերի բնութագրերի (նշված է ձախ սյունակում) և սիմբիոզի տարրեր տեսակների (նշված է աջ սյունակում) միջև։ Նշել ճիշտ համապատասխանությունը։**

Բնութագիր

- A. փոխազդող տեսակներից մեկը օգտագործում է մյուս տեսակի օրգանիզմը, որպես գոյության միջավայր և սննդի աղբյուր
- B. փոխազդող տեսակներից մեկը բնակվում է բույսերի վեգետատիվ օրգաններում՝ առաջ բերելով տարրեր հիվանդություններ
- C. փոխազդող տեսակներից միայն մեկն է ստանում օգուտ, իսկ մյուսը այդ փոխազդեցության հանդեպ անտարբեր է
- D. փոխազդող տեսակները ստանում են օգուտ,  
սակայն դրանց համատեղ գոյությունը պարտադիր չէ
- E. լոցման ձևները ստանում են սննդի մնացորդներ այն կենդանիներից, որոնց ուղեկցում են և միաժամանակ պաշտպանվում գիշատիչներից
- F. Էպիֆիտ բույսերն օգտագործում են ծառարույսերը  
որպես հենարան

Սիմբիոզի տեսակ

- 1. կոռպերացիա
- 2. մակարուծություն
- 3. կոմենսալիզմ

53

**Թվարկվածներից ո՞ր մուտացիան (նշված է ձախ սյունակում) ժառանգական նյութի կազմավորման ո՞ր մակարդակով է պայմանավորված (նշված է աջ սյունակում)։ Նշել համապատասխանություններն ըստ հերթականության։**

Մուտացիա

Ժառանգական նյութի կազմավորման  
մակարդակ

- A. անեռուպիդիա
- B. ինվերսիա
- C. հապլիդիա
- D. նուկլեոտիդային գույզի  
փոխարինում ԴՆԹ-ում
- E. կետային
- F. տրանսլոկացիա
- G. տրիստմիա

- 1. գենոմային
- 2. քրոմոսոմային
- 3. գենային

54

**Ի՞նչ բնորոշ առանձնահատկություններ ունի սողունների նյարդային համակարգը։ Նշել բոլոր ճիշտ պնդումները.**

1. համեմատած երկկենցաղների հետ սողունների գլխուղեղում լավ զարգացած են առջևի ուղեղի կիսազնդերը
2. համեմատած երկկենցաղների հետ սողունների գլխուղեղում լավ զարգացած են առջևի ուղեղը և ուղեղիկը
3. սողունների գլխուղեղում ուղեղիկը, առջևի և միջին ուղեղների կեղևներն ունեն գորշ կեղևային նյութի հետքեր
4. օձերը լավ են լսում
5. սողունների գլխուղեղի առջևի ուղեղի կիսազնդերի կեղևում նկատվում են գորշ ուղեղային նյութի հետքեր
6. սողունների լսողության օրգանը կազմված է ներքին և միջին ականջներից

**Ո՞ր պնդումն է ճիշտ մարդու նյարդային համակարգի համար: Նշել բոլոր ճիշտ պնդումները.**

1. Երկարավուն ուղեղի վճասումը կարող է հանգեցնել ակնթարթային մահվան
2. զգայարանների ենթակեղևային կենտրոնները տեղադրված են տեսաքառում, որը ստացված գրգիռները փոխանցում է մեծ կիսագնդերի կեղևի համապատասխան գոտի
3. սիմպաթիկ նյարդային համակարգի կենտրոնական բաժինը տեղադրված է ողնուղեղի պարանոցային վերջին, կրծքային և գոտկային հատվածների գորշ նյութի հետևի եղջյուրներում
4. նյարդային համակարգը վերահսկում է ներզատական համակարգի միջոցով իրականացվող օրգանիզմի հումորալ կարգավորումը
5. գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևը համարվում է հոգեկան գործունեության նյութական հիմքը
6. կենտրոնական նյարդային համակարգից դուրս գտնվող նեյրոնների մարմինների կուտակումները կոչվում են նյարդային կենտրոններ
7. կենտրոնական նյարդային համակարգը կազմված է գլխուղեղից, ողնուղեղից և դրանցից սկիզբ առնող 31 զույգ ողնուղեղային և 12 զույգ գանգուղեղային նյարդերից

**Նշել բոլոր ճիշտ պնդումները.**

1. Ապիտակուցի մոլեկուլում մի ամինաթթվի կարբօքսիլ խմբի մնացորդի թթվածնի և մյուս ամինաթթվի ամինախմբի մնացորդի ջրածնի միջև առաջանում է կովալենտ պեպտիդային կապ
2. ի տարրերություն բակտերիաների՝ բույսերի ժառանգական տեղեկատվությունը գաղտնագրված է ՌՆԹ-ում
3. լիզոսոմների ֆերմենտները բջջում ճեղքավորում են կենսապոլիմերները մինչև մոնոմերներ
4. Վիրուսային մասնիկում ՌՆԹ-ն կրկնապատկվում է
5. «քջիջ» տերմինն առաջին անգամ կիրառել է Ռուբեն Վիրխովը
6. սնկերի բջջապատիկ կազմության մեջ մտնում են մանանը և խիտինը
7. գլյուկոզից կաթնաթթվի առաջացումը պլաստիկ փոխանակության ռեակցիայի օրինակ է

**Նշել բոլոր ճիշտ պնդումները.**

1. համաձայն Թ.Մորգանի՝ պտղաճանճի երկինտերոզիվուտ էգի և ռեցեսիվ հատկանիշներով արուի խաչաերման արդյունքում սերնդում կստացվի չորս ֆենոտիպ՝ յուրաքանչյուրից 25 %
2. ծղրիդի, սենյակային ճանճի, աղավնու, փայտոջիլի արուներն ունեն մեկ սեռական քրոմոսոմ
3. գեների շղթայակցումը բացարձակ չէ
4. թռչունների օրգանիզմում առկա է արական հետերոգամետություն
5. շղթայակցված խմբերի թիվը հավասար է քրոմոսոմների դիալոիդ թվին
6. մեկ քրոմոսոմի գեներն առավելապես ժառանգվում են միասին՝ շղթայակցված
7. մեկ քրոմոսոմում կան բազմաթիվ գեներ
8. մեկ քրոմոսոմի գեների խումբն անվանում են շղթայակցված խումբ

58

## Նշել բոլոր սխալ պնդումները.

- թրոմբոցիտները և լեյկոցիտները չափսերով էրիթրոցիտներից փոքր են
- 1մ<sup>3</sup> արյան մեջ պարունակվում է ավելի քիչ թրոմբոցիտ, քան էրիթրոցիտ
- օրգանիզմում էրիթրոցիտների թվի նվազման դեպքում զարգանում է սակավարյունուրյուն
- թրոմբոցիտները և լեյկոցիտները քայլայվում են փայծաղում, չունեն կորիզ
- արյան IV խումբ ունեցող մարդկանց էրիթրոցիտների թաղանթներում բացակայում են **α** և **β** ազյուտինիները, պլազմայում առկա են A և B ազյուտինոգեները
- արյան II խումբ ունեցող մարդկանց էրիթրոցիտների թաղանթներում առկա է **β** ազյուտինինը, իսկ պլազմայում՝ A ազյուտինոգենը

59

## Նշել նարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործնքացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

- ստորին ազատ վերջույթի կմախքը կազմում են ազդրոսկրը, ծնկոսկրը, մեծ և փոքր ոլոքները, նախագարշապարի և գարշապարի ոսկորները, մատնոսկրերը
- թարթիչավոր մարմնի մկանների գործառույթի թուլացման դեպքում խանգարվում է տեսողությունը
- կիսաբոլոր խողովակների մազակազմ բջիջներում առաջացած նյարդային ազդակները հաղորդվում են մեծ կիսագնդերի կեղևի գագաթային բիլք
- ցանցաթաղանթում կան մոտ 7 մլն սրվակներ
- ոսկորներն արտաքինից պատված են շրջոսկրով, որն ապահովում է դրանց աճը հաստությամբ
- բոլոր ռեֆլեքսները տեսակային են

60

## Մաշկի մակերևույթից ճառագայթվել է 29400 կՎ ջերմային էներգիա: Քանի՞ միլիգրամ քրտինք է գոլորշիացվել մաշկի յուրաքանչյուր քրտնագեղձով այդ ընթացքում: Հաշվի առնել, որ ջերմաճառագայթման միջոցով օրգանիզմից հեռացվում է 3 անգամ ավելի շատ էներգիա, քան գոլորշիացման միջոցով և 1 գ քրտինքի գոլորշիացման համար պահանջվում է 2,45 ԿՎ էներգիա:

- (61-62) Օրգանիզմում գլյուկոզի ծեղման պրոցեսում օգտագործվել է 42 մոլ  $O_2$ , և անթրվածին փուլի էներգիայի կորուստը կազմել է 1680 կՋոուլ: 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաքրու ծեղման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋոուլ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա:

61

Քանի՞ մոլ ջուր է առաջացել այդ ընթացքում:

62

Քանի՞ կՋոուլ է կազմում ընդհանուր էներգիան:

- (63-64) 100 օրվա ընթացքում (միջինը 15-ժամյա լուսային օր) ֆոտոսինթեզի պրոցեսում կլանվել է 66 կգ  $CO_2$ :

63

Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը( $m^2$ ):

64

Քանի՞ գրամ օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել մեկ օրում:

(65-67) Օրվա ընթացքում մարդն արթուն է եղել 18 ժամ, ծանր ֆիզիկական աշխատանք է կատարել 5 ժամ:

65

Որքա՞ն արյուն է մղվել արյան շրջանառության փոքր շրջան մեկ օրվա ընթացքում, եթե սրտի կծկումների հաճախականությունն աշխատանքի ժամանակ ավելացել է 1,6 անգամ, փորոքից մեկ կծկման ժամանակ մղված արյան ծավալը՝ 2 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում սիրտը մեկ րոպեի ընթացքում կծկվում է 70 անգամ, և փորոքից մեկ կծկման ժամանակ մղված արյան ծավալը 70 մլ է:

66

Քանի՞ լիսր թթվածին է յուրացվել օրգանիզմում մեկ օրվա ընթացքում, եթե աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագանում են 2 անգամ, շնչառական ծավալը՝ 1,6 անգամ, իսկ յուրացվող թթվածնի ծավալն աճում է 25%-ով: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում և գազափոխանակության է մասնակցել ամբողջ ներշնչված օդը:

67

Քանի՞ լիսր թթվածին է ստացել զլյուուլեղը 5 ժամ տևողությամբ աշխատանքի ընթացքում: Ընդունել, որ զլյուուլեղը է հասնում առտա մղված արյան ծավալի 20%-ը:

- (68-69) Աչքերի շագանակագունությունը ժառանգվում է որպես առատության դոմինանտ հատկանիշ, երկնագունությունը՝ ռեցեսիվ, իսկ հեմոֆիլիան՝ որպես ռեցեսիվ X քրոմոսոմին շղթայակցված հատկանիշ: Ընտանիքում, որտեղ ամուսինը տառապում էր հեմոֆիլիայով և ուներ երկնագույն աչքեր, իսկ կինն ուներ շագանակագույն աչքեր, ծնվեց երկնագույն աչքերով հեմոֆիլիկ երեխա:

68

Գտնել այդ ընտանիքում հեմոֆիլիայով տառապող երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

69

Գտնել այդ ընտանիքում երկնագույն աչքերով առողջ երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

**Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.**

1. սիմպաթիկ նյարդային համակարգի ազդեցությամբ միզագոյացումը ճնշվում է, և օրվա ընթացքում առաջացող մեզի ծավալը նվազում է
2. երիկամների աշխատանքը կարգավորվում է ինքնավար նյարդային համակարգի միջոցով
3. պարասիմպաթիկ նյարդային համակարգի ազդեցությամբ ուժեղանում է ջրի հետադարձ ներծծումը
4. առաջնային մեզն, անցնելով ոլորում և ծնկածն խողովակներով, կորցնում է ծավալի մեծ մասը՝ ջուրը, գլյուկոզը, օրգանիզմին անհրաժեշտ ամօրգանական աղերը վերադարձվում են արյան մեջ հետադարձ ներծծման ընթացքում
5. երիկամների աշխատանքի հումորալ կարգավորումն իրականացնում են վահանածն գեղձը և մակերիկամների միջուկային շերտը
6. միզագոյացման հումորալ կարգավորումն իրականացնում են մակուղեղը և մակերիկամի կեղևային շերտը